Ամփոփ նյութ

««ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալի որոշմամբ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց բանկերի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
19/01/2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/02ԲԳ-Ա

««ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Բանկի նկատմամբ **կիրառել տուգանք՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև նախազգուշացում՝ Որոշմամբ նկարագրված միջոցառումներն իրականացնելու հանձնարարականներով.**
2. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով նախատեսված միջոցառումներն իրականացնելուց հետո առավելագույնը 5-օրյա ժամկետում իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնել Կենտրոնական բանկ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բանկ մուտքագրվելու կամ Բանկի լիազորված անձին սահմանված կարգով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է երկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՄԵՆ ՆՈՒՐԲԵԿՅԱՆ